ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 03.05.2022թ.),

քննելով «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից 12.05.2022թ. ներկայացված (12.05.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/35 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 12.05.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 1-ին մասի 1-ն բաժնի համաձայն՝ աշխատանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Ընթացակարգի հրավերի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՀ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև աշխատանք), որը խմբավորված է 3 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Մ-4 Երևան - Սևան - Իջևան – Ադրբեջանի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+920 վրա գտնվող Դիլիջանի թունելի
2	Մ-3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ137+100 Պուշկինի թունելի
3	Մ-7 /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - Թուրքիայի Հանրապետության սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վրա գտնվող կմ4+500 Նալբանդի թունելի

Ընթացակարգի հրավերի 5.3-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ի՝ գնային առաջարկի համաձայն՝ առաջարկվում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 1.2-րդ կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին, ՀՀ տրանսպորտի և կապի

նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի N 710-Ն որոշման համապատասխան, կատարման ժամկետ է սահմանվում՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի նախագծի 7.16-րդ կետի համաձայն՝ 2023 և հաջորդող տարիներին աշխատանքները կկատարվեն ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ–ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.03.2022թ. բոլոր մասնակիցներին էլեկտրոնային նամակով տեղեկացրեց 28.03.2022թ. ժամը 11:00-ին հրավիրվելիք գների շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին /արտատպումը կցվում է/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի ժամանակ՝ գների շուրջ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց 645.000.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, այսինքն յուրաքանչյուր տարվա համար 129.000.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Նույն նիստը ժամանակ, գնահատող հանձնաժողովը հայտարարեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի 2022թ. գնումների պլանով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով սահմանված գումարը նախատեսված է 5 տարիների կատարվելիք աշխատանքների համար, իսկ բոոր մասնակիցների կողմից առաջարկվող գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշում կայացրեց չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2022թ. հրավիրված գների շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստի արձանագրությունը և Ընթացակարգը՝ 1-ին չափաբաժնի մասով, չկայացած հայտարարելու մասին որոշումը /հայտարարությունը, մինչ օրս www.gnumner.am կայքաում հրապարակված չէ:

«ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն 08.04.2022թ. էլեկտրոնային եղանակով դիմել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին /ապացույցը կցվում է/՝ նիստի արձանագրությունը տրամադրելու խնդրանքով, սակայն արձանագրությունը մինչ օրս չի տրամադրվել:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն նշել ենք, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.03.2022թ. բոլոր մասնակիցներին էլեկտրոնային նամակով տեղեկացրեց 28.03.2022թ. ժամը 11:00-ին հրավիրվելիք գների շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ գնման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքը: Միևնույն ժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքը նաև սահմանում է, որ գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները հրապարակվում են պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, նիստին հաջորդող աշխատանքային օրը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2022թ. հրավիրված նիստի արձանագրությունը մինչ օրս չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, իսկ «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ն 08.04.2022թ. էլեկտրոնային եղանակով ներկայացրած դիմումը՝ նիստի արձանագրությունը տրամադրելու խնդրանքով, գնահատող հանձնաժողովի կողմից թողնվել է առանց արձագանք:

Վերոհիշյալ պայմաններում, երբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան նիստի արձանագրությունը չի հրապարակվել տեղեկագրում և չի տրամադրվել «ԱԼՈՒՇ-ԱՐԱՔՍ» ՍՊԸ-ին՝ վերջինիս գրավոր պահանջի հիման վրա, ՍՊԸ-ն փաստացիորեն զրկվել է 28.03.2022թ. նիստի ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումները /այդ թվում նաև Ընթացակարգը՝ 1-ին

չափաբաժնի մասով, չկայացած հայտարարելու մասին որոշումը/ բողոքարկելու հնարավորությունից՝ համապատասխան գրավոր ապացույցի բացակայության պայմաններում:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրելու բոլոր արձանագրությունները և չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.05.2022թ. թիվ 01/07/1549-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարության 19.05.2022թ. թիվ 693-Ա որոշմամբ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2021 թվականի նոյեմբերի 24-ին հայտարարված թիվ ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով

(Դիլիջանի թունելի պահպանման աշխատանքների կատարում) չկայացած է հայտարարվել՝ տվյալ տեխնիկական բնութագրով գնման առարկայի գնման պահանջի գոյությունը դադարելու հիմքով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. թիվ 7 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 28.03.2022թ. գնահատող հանձնաժողովի նոր նիստ հրավիրելու վերաբերյալ՝ 1-ին չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նպատակով:

3. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.05.2022թ. թիվ 01/07/1549-2022 գրությամբ, հայտնել է, որ ՀՀ կառավարության 19.05.2022թ. թիվ 693-Ա որոշմամբ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2021 թվականի նոյեմբերի 24-ին հայտարարված թիվ ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով (Դիլիջանի թունելի պահպանման աշխատանքների կատարում) չկայացած է հայտարարվել՝

տվյալ տեխնիկական բնութագրով գնման առարկայի գնման պահանջի գոյությունը դադարելու հիմքով:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի 12.05.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպես, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. թիվ 7 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 28.03.2022թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նոր նիստ հրավիրելու վերաբերյալ՝ 1-ին չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նպատակով:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.05.2022թ. թիվ 01/07/1549-2022 գրությամբ, հայտնել է, որ որ ՀՀ կառավարության 19.05.2022թ. թիվ 693-Ա որոշմամբ ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2021 թվականի նոյեմբերի 24-ին հայտարարված թիվ ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով (Դիլիջանի թունելի պահպանման աշխատանքների կատարում) չկայացած է հայտարարվել՝ տվյալ տեխնիկական բնութագրով գնման առարկայի գնման պահանջի գոյությունը դադարելու հիմքով:

«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ 08.04.2022թ. էլեկտրոնային եղանակով դիմել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նիստի արձանագրությունը տրամադրելու խնդրանքով, սակայն արձանագրությունը մինչ օրս Ընկերությանը չի տրամադրվել:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. նիստի թիվ 7 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ 28.03.2022թ. հրավիրվել է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների նիստ, մինչդեռ՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.03.2022թ. հրավիրված նիստի արձանագրությունը մինչ օրս չի հրապարակվել տեղեկագրում և ինչպես հայտնել է բողոքաբերը, 08.04.2022թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին նիստի արձանագրությունը տրամադրելու պահանջ ներկայացված լինելու

պայմաններում, արձանագրությունը մինչ օրս Ընկերությանը ևս չի տրամադրվել, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ գտնում եմ, որ «Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ալուշ-Արաքս» ՍՊԸ-ի կողմից 12.05.2022թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՃԴ-ՀԲՄԱՇՁԲ-2022/3Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրելու գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և չկայացած հայտարարելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**